Հաճախակի տրվող հարցեր հաղորդակցման ծառայությունների վերաբերյալ

Հաղորդակցվելու ունակությունը թույլ է տալիս մարդուն կապ հաստատել ուրիշների հետ և հնարավորություն է տալիս կատարել առօրյա գործողություններ: Հաղորդակցության իրավունքների մասին օրինագիծը սահմանում է անհատի կյանքի բոլոր ոլորտներում հաղորդակցվելու իրավունքը, ներառյալ ուրիշների հետ շփվելը, սոցիալական հարաբերություններ պահպանելը, ընտրություն կատարելը, կարծիքներ փոխանակելը, հարցեր տալը, տեղեկատվություն տրամադրելը, ինչպես նաև ցանկությունները, կարիքներն ու զգացմունքներն արտահայտելը: Ամենալավն այն է, երբ տեղեկանում ենք, թե ինչպես է անհատը նախընտրում շփվել: Քանի որ յուրաքանչյուրի հաղորդակցման կարիքներն ունեն բարդություններ, արդյունավետ լուծումը կարող է տարբեր լինել յուրաքանչյուրի համար: Եթե ունեք որևէ հարց կամ մտահոգություն կամ ցանկանում եք, որ այս փաստաթուղթը թարգմանվի այլ լեզուներով, խնդրում ենք գրել Questions@dds.ca.gov հասցեին:

Հարց 1: Որո՞նք են հաղորդակցման ծառայությունները:
Պ1. Հաղորդակցման ծառայությունները ներառում են միջամտություններ, վերապատրաստումներ և/կամ տեխնոլոգիաներ, որոնք օգնում են անձանց արդյունավետ կերպով շփվել միմյանց հետ: Նրանք կարող են նաև օգնել ընտանիքի անդամներին աջակցել անհատի հաղորդակցման զարգացմանը:

Հ2. Ինչպե՞ս են հաղորդակցման ծառայություններն օգնում անհատներին:
Պ2. Հաղորդակցությունը կարևոր նշանակություն ունի մարդկանց կապելու և հարաբերություններ կառուցելու հարցում: Հաղորդակցման ծառայություններն օգնում են անձանց արտահայտել իրենց մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները: Այս հմտությունների զարգացումը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը և թույլ է տալիս նրանց լիարժեք կերպով մասնակցել ուսմանը, աշխատանքին և համայնքային կյանքին: Բոլոր անհատներին պետք է տրվի հաղորդակցվելու հնարավորություն:

Հ3. Ո՞վ է օգտվում հաղորդակցման ծառայություններից:
Պ3. Անհատները, ովքեր չեն կարող բանավոր խոսքն օգտագործել որպես հաղորդակցման հիմնական միջոց, կարող են օգտվել այս ծառայություններից: Այս անհատները կարող են չխոսել կամ չարտահայտվել: Կապվեք Ձեր տեղական տարածաշրջանային կենտրոնի հետ, եթե Դուք կամ Ձեր ընտանիքի անդամը կարող եք օգտվել հաղորդակցման ծառայություններից: 3-21 տարեկան երեխաները կարող են նաև խորհրդակցել իրենց Անհատական կրթական ծրագրի (IEP) թիմի հետ՝ իրենց դպրոցում հասանելի հաղորդակցման աջակցության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

Հ4. Որո՞նք են հաղորդակցման որոշ տարբեր եղանակները:
Պ4. Կան հաղորդակցման բազմաթիվ մեթոդներ, որոնք անհատներն օգտագործում են՝ կախված իրենց կարիքներից: Ոմանք կարող են օգտագործել տեսողական լեզու, ինչպիսիք են ամերիկյան ժեստերի լեզուն (ASL), վկայագրված խուլ թարգմանիչներ (CDI) և ASL թարգմանիչներ՝ խուլ կամ լսողության խնդիրներ ունեցող անձանց և խոսակցական լեզու ունեցող մարդկանց միջև հաղորդակցությունը հնարավոր դարձնելու համար: Որոշ մարդիկ կարող են օգտագործել օժանդակ հաղորդակցություն: Որոշ օրինակներ ներառում են՝

- Հաղորդակցման տախտակներ
- Խոսք ստեղծող սարքեր, և
- Պլանշետներ՝ հաղորդակցման հավելվածներով

Այլ անհատներ կարող են օգտագործել դիմացկուն բժշկական սարքավորումներ, որոնք օգնում են նրանց խոսել: Որոշ օրինակներ ներառում են՝

- Ձայնային պրոթեզ
- Էլեկտրոլարինքս

Հ5. Ի՞նչ է իրենից ներկայացնում լրացուցիչ և այլընտրանքային հաղորդակցությունը (AAC):
Պ5. Անհատները, ովքեր չեն կարողանում բանավոր արտահայտվել, կարող են օգտագործել հաղորդակցման բազմաթիվ ձևեր՝ ուրիշների հետ հաղորդակցվելու համար: AAC-ն կարող է ներառել օժանդակ և ինքնուրույն հաղորդակցման մեթոդներ: Օժանդակ հաղորդակցությունը ներառում է էլեկտրոնային կամ ոչ էլեկտրոնային սարքեր, ինչպիսիք են նկարները, գրելու սարքերը, պլանշետները, հաղորդակցման տախտակները և խոսք ստեղծող սարքերը (SGD): Ինքնուրույն հաղորդակցությունը չի պահանջում լրացուցիչ սարքեր և կարող է ներառել դեմքի արտահայտություններ, մարմնի կեցվածք, ժեստեր կամ ձեռքով օգտագործված նշաններ: Բոլոր տարիքի մարդիկ կարող են օգտագործել AAC-ը, և դա նախնական հմտություններ չի պահանջում:

Հ6. Ի՞նչ է ASL-ը:
Պ6. Ամերիկյան ժեստերի լեզուն (ASL) բնական լեզու է, որն ունի նույն լեզվական հատկությունները, ինչ խոսակցական լեզուները: Դրա քերականությունն արտահայտվում է ձեռքերի ձևերի, դեմքի արտահայտությունների և մարմնի լեզվի միջոցով՝ իմաստը փոխանցելու նպատակով: Այն շատ հյուսիսամերիկացիների հիմնական լեզուն է, ովքեր խուլ են և լսողության խնդիրներ ունեն: Լսող շատ մարդիկ ազատ խոսում են ASL-ով, և այն Միացյալ Նահանգներում երրորդ ամենատարածված լեզուն է: Աշխարհում օգտագործվում է ավելի քան 300 տարբեր ժեստերի լեզու:

Հ7. Ի՞նչ է Pro-tactile ASL-ը:
Պ7. Pro-tactile ASL-ը (PTASL) շոշափելի լեզու է խուլ և կույր անձանց համար, որը մշակվել է նրանց կողմից և նրանց համար: Հաղորդակցման համար օգտագործվում է հպում մարմնին,, այլ ոչ թե տեսողական նշաններ: PTASL-ը հաղորդակցման զարգացող համակարգ է: Ձեռքերի, բազուկների և մեջքի վրա համատեղ շփման տարածքը հնարավորություն է տալիս ավելի ներառական փոխազդեցություններ և ավելի խորը կապեր հաստատել:

Պ8. Ո՞վ է որոշում, թե ինչ հաղորդակցման համակարգ կամ ծառայություն է անհրաժեշտ:
Պ8. Անհատը կամ ընտանիքը կարող է խորհրդակցել լիցենզավորված և համապատասխանաբար վերապատրաստված լոգոպեդի (SLP) հետ՝ լիարժեք գնահատման համար: Հաղորդակցության և հաղորդակցման աջակցության համապատասխան եղանակը կամ եղանակները որոշվում են անհատի և նրա

հաղորդակցման գործընկերների կարիքներով (ASHA, 2024): Լսողության կորուստ ունեցող անձինք կարող են նաև հանդիպել խուլերի հետ զբաղվող մարզչի հետ և ուղեգրվել աուդիոլոգի մոտ՝ այլ տարբերակներ ուսումնասիրելու համար: «Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին» օրենքի 36.303 բաժինը պահանջում է, որ հաղորդակցման գործիքները կամ օգնությունը տրամադրվեն մատչելի ձևաչափերով, տրամադրվեն ժամանակին և պաշտպանվեն հաշմանդամություն ունեցող անձանց գաղտնիությունն ու անկախությունը: Բացի այդ, այս օժանդակ միջոցների և ծառայությունների արդյունավետությունը կախված է անհատի կողմից օգտագործվող հաղորդակցման մեթոդից, հաղորդակցության բնույթից, տևողությունից և բարդությունից, ինչպես նաև այն համատեքստից, որտեղ տեղի է ունենում հաղորդակցությունը:

Հ9. Ինչպե՞ս են ընտանիքներն օգտվում հաղորդակցման ծառայություններից:
Պ9. Կան հաղորդակցման ծառայություններ ձեռք բերելու բազմաթիվ եղանակներ՝ կախված Ձեր երեխայի հաղորդակցման կարիքներից: Ընտանիքները կարող են կապ հաստատել իրենց տեղական տարածաշրջանային կենտրոնի կամ ծառայությունների համակարգողի հետ՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: Ընտանիքները կարող են նաև ուսումնասիրել իրենց ապահովագրությունը լոգոպեդիայի և օժանդակ տեխնոլոգիական ծառայությունների համար: Խուլ և լսողության խնդիրներ ունեցող երեխաները ուղեգրվում են լսողության սկրինինգի և խուլերի հարցերով զբաղվող մասնագետների մոտ, որոնք տրամադրվում են LEAD-K ընտանեկան ծառայությունների կողմից: Ընտանիքների համար հասանելի են անվճար առցանց ժեստերի լեզվի ծրագրեր: Կան պետական ծրագրեր, ինչպիսիք են՝ Կալիֆոռնիայի մանկական ծառայությունները (CCS), որը կարող է ֆինանսավորել լոգոպեդիայի ծառայությունները: Տեղական կրթական գործակալությունները (LEA-ներ) կարող են ապահովել լոգոպեդիա կամ գնել օժանդակ տեխնոլոգիաների (AT) սարքեր և ծառայություններ՝ երեխայի կարիքներին համապատասխան: Գտեք Ձեր տեղական տարածաշրջանային կենտրոնը՝ օգտագործելով այս հղումը: Տարածաշրջանային կենտրոնի որոնում

Հաղորդակցման ծառայություններ 0-ից մինչև 36 ամսական երեխաների համար

Հարց 1: Ի՞նչ պետք է անեմ, եթե մտահոգություններ ունեմ իմ նորածնի/փոքրիկ երեխայի լեզվական զարգացման վերաբերյալ:
Պ1. 0-ից մինչև 3 տարեկան հասակի զարգացման ժամանակահատվածը կարևոր է խոսքի, լեզվի և ճանաչողական զարգացման համար: Ընտանիքները կարող են խորհրդակցել իրենց առաջնային բուժօգնության մատակարարի հետ՝ իրենց մտահոգությունները քննարկելու համար: Երեխայի մանկաբույժը կարող է Ձեզ ուղեգրել տարածաշրջանային կենտրոն կամ լիցենզավորված լոգոպեդի մոտ՝ գնահատման նպատակով: Ձեզ նաև կարող է առաջարկվել, որպեսզի Ձեր երեխան անցնի լսողական գնահատում: Կարող եք նաև այցելել «Վաղ մեկնարկ» կայքէջը՝ տեղեկատվության և ռեսուրսների համար:

Հ2. Ինչպե՞ս կարող եմ իմանալ՝ արդյոք իմ երեխան լոգոպեդիայի կարիք ունի՞, թե՞ ոչ:
Պ2. Ամեն երեխա եզակի է, և խոսքի ու լեզվի զարգացման որոշակի տատանումներ նորմալ են: Եթե Ձեր երեխան չի համապատասխանում Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) զարգացման նշաձողերին, կամ եթե մշտական մտահոգություններ ունեք Ձեր երեխայի խոսքի և/կամ լեզվի զարգացման վերաբերյալ, խորհրդակցեք Ձեր մանկաբույժի կամ տեղական տարածաշրջանային կենտրոնի հետ՝ զարգացման սկրինինգի կամ խոսքի և լեզվի գնահատման ուղղորդման համար: Ծնողները կարող են նաև կապ հաստատել իրենց տեղական տարածաշրջանային կենտրոնի հետ՝ իրենց երեխային «Վաղ մեկնարկ» ծրագրին ուղղորդելու համար: Խնդրում ենք այցելել CDC-ի կայքէջը տարիքին համապատասխան զարգացման փուլերի ցանկին ծանոթանալու

համար: Կալիֆոռնիայի Կրթության վարչությունը (CDE) նաև ունի 0-ից մինչև հինգ տարեկան երեխաների համար լեզվի զարգացման փուլերի համապարփակ ցանկ՝ SB 210 Լեզվի զարգացման կարևորագույն փուլերը:

Հ3. Ի՞նչ է խոսքի և լեզվի ուշացումը:
Պ3. Խոսքի կամ լեզվի ուշացումն այն է, երբ երեխան չի համապատասխանում տիպիկ զարգացման կարևորագույն փուլերին: Խոսքի և լեզվի զարգացման ուշացումը նշանակում է, որ երեխան զարգացնում է իր հաղորդակցման հմտությունները (թե՛ լեզուն հասկանալը, թե՛ արտահայտելը) իր տարիքի համար սովորականից ավելի դանդաղ տեմպերով: Եթե երեխան դժվարանում է կիսվել խնդիրներով, մտքերով, գաղափարներով և զգացմունքներով կամ դժվարանում է հասկանալ, թե ինչ են ուրիշներն ասում, ապա նա կարող է ունենալ լեզվի ուշացում կամ խանգարում: Եթե երեխան դժվարանում է հնչյուններ և բառեր արտաբերել, նա կարող է խոսքի ուշացում կամ խանգարում ունենալ:

- Խոսք. վերաբերում է հնչյունների և բառերի ֆիզիկական արտաբերմանը:
- Լեզու. ներառում է բառերի, արտահայտությունների և նախադասությունների հասկացողությունն ու օգտագործումը հաղորդակցվելու համար:

Հ4. Ի՞նչ լոգոպեդիկ խնամքի մոդել կարող է օգտակար լինել իմ երեխայի համար:
Պ4. Լոգոպեդիկ շարունակական խնամքի մոդելն առաջարկում է ավելի ամբողջական, ինտեգրված և արդյունավետ մոտեցում վաղ միջամտության համար: Այս մոդելն առաջարկում է զարգացման բարելավված արդյունքներ, բարելավված ներգրավվածություն և աջակցություն, համապարփակ և ինտեգրված ծառայություններ, ավելի մեծ անհատականացում և ճկունություն, ինչպես նաև արդյունավետության և կարողության բարձրացում:

Հ5. Որո՞նք են որոշ ռեսուրսներ խուլ կամ լսողության խնդիրներ ունեցող երեխաների համար:
Պ5. Կալիֆոռնիայի կրթական օրենսգրքի 56326.5 բաժինը պահանջում է ծնողների համար ռեսուրսների մշակում՝ զարգացման խնդիրները բացահայտելու համար և պարտադրում է Կալիֆոռնիայի Կրթության վարչությանը (CDE) ընտրել առկա գործիքներ կամ գնահատումներ մանկավարժների համար՝ խուլ և լսողության խնդիրներ ունեցող երեխաների լեզվի և գրագիտության զարգացումը գնահատելու նպատակով: CDE-ն ծնողներին տրամադրում է լեզվական նվաճումների ցանկ՝ իրենց երեխայի լեզվական զարգացումը հետևելու համար: 0-ից մինչև հինգ տարեկան խուլ կամ լսողության խնդիրներ ունեցող երեխաների լեզվական զարգացման փուլերի համապարփակ ցանկի համար կարող եք այցելել CDE կայքը՝https://www.cde.ca.gov/sp/ss/dh/sb210langmilestones.asp:

Հ6. Ի՞նչ անել, եթե նորածնի սկրինինգային թեստի ժամանակ իմ երեխայի մոտ լսողության կորուստ է ախտորոշվում**:**
Պ6. Դիմեք Ձեր մանկաբույժին՝ որոշելու, թե արդյոք Ձեր երեխան պետք է կրկնակի հետազոտվի: Մանկաբույժը կամ հիվանդանոցը Ձեր երեխային կուղարկի մանկական աուդիոլոգի մոտ հետագա հետազոտության, մինչև երեխայի մեկ ամսական դառնալը: Եթե Ձեր երեխայի մոտ լսողության կորուստ է հայտնաբերվել, ապա Ձեր աուդիոլոգը պետք է ուղեգրի «Վաղ մեկնարկ և Lead-K ընտանեկան ծառայություններ» կենտրոն: Կարող եք նաև կապ հաստատել վարչության հետ earlystart@dds.ca.gov հասցեով կամ այցելեք «Վաղ մեկնարկ» կայքէջը Ձեր տեղական «Վաղ մեկնարկ» ծրագրի հետ կապվելու համար: Պահանջներին համապատասխանելու դեպքում կարևոր է, որ Ձեր երեխան հնարավորինս շուտ սկսի ծառայություններ ստանալը:

Ընտանիքների համար կան լրացուցիչ ռեսուրսներ, որոնցից կարելի է օգտվել.

- Լսողության կորուստ երեխաների մոտ | Լսողության կորուստ երեխաների մոտ | CDC
- LEAD-K ընտանեկան ծառայություններ
- Ձեռքեր և Ձայներ
- Իմ երեխայի լսողությունը

Հ7. Կարո՞ղ է արդյոք իմ նորածինը/փոքրիկն օգուտ քաղել հաղորդակցման ծառայություններից կամ AAC-ից օգտվելուց:
Պ7. AAC-ի օգտագործման համար տարիքային սահմանափակում չկա: Խոսքի, լեզվի և հաղորդակցման գնահատում կատարելն անհրաժեշտ է Ձեր երեխայի համար հաղորդակցման ճիշտ մոտեցումը կամ համակարգը որոշելու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Ձեր տեղական տարածաշրջանային կենտրոն:

<u>Խուլերի և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հաղորդակցման ծառայություններ</u>

Հարց 1: Ինչպե՞ս է խլությունը կամ լսողության խանգարումն ազդում խոսքի և լեզվի զարգացման վրա:
Պ1. Հնչյուններն ու բառերը լսելը կարող է օգնել երեխաներին լեզվի տիրապետման հարցում: Այնուամենայնիվ, խոսքը և լսողությունը լեզվական հմտություններ ձեռք բերելու մի քանի մեթոդներ են միայն: Ամերիկյան ժեստերի լեզուն (ASL) հնարավորություն է տալիս վաղ տարիքից սովորել լեզու, ինչը կարևոր է ճանաչողական և սոցիալական զարգացման համար: Ծնվելուց հետո ASL-ի միջոցով շփվող երեխաները հասնում են լեզվական նվաճումների և զարգացնում են արտահայտչական և ընկալունակ լեզվական հմտություններ: Լեզվի զարգացումը կարող է տեղի ունենալ կարդալու, նկարներ դիտելու, ժեստերի լեզվի և խաղի միջոցով: Բացի այդ, ժեստերը, դեմքի արտահայտությունները և ոչ բանավոր հաղորդակցման այլ ձևերը կարող են նպաստել երեխայի լեզվական զարգացմանը:

Հ2. Ինչպե՞ս են շփվում խուլ և լսողության խնդիրներ ունեցող մարդիկ:
Պ2. Կան բազմաթիվ եղանակներ, որոնցով խուլ և լսողության խնդիրներ ունեցող անձը շփվում է: Յուրաքանչյուր անձ եզակի է և ունի տարբեր հաղորդակցման կարիքներ ու նախասիրություններ՝ կախված փոխազդեցության միջավայրից և նպատակից: Հաղորդակցման որոշ եղանակներ ներառում են.

- ASL
- Խոսք
- Խոսքի ընթերցում (շրթունքների ընթերցում)
- Ժեստեր
- Գրելը
- Տեսահեռախոս
- Լրացուցիչ այլընտրանքային հաղորդակցություն (AAC)

<u>Խուլ և կույր անձանց համար հաղորդակցման ծառայություններ</u>

Հարց 1: Ի՞նչ է խլության և կուրության համակցումը:
Պ1. Խլությունը-կուրությունը վիճակ է, որի դեպքում անհատն ունի լսողության և տեսողության համակցված կորուստ: Խուլ և կույր անձը կարող է ունենալ օգտագործելի

տեսողության և/կամ լսողության աստիճաններ: Զարգացման ծառայությունների վարչության կայքէջում կան խլության և կուրության վերաբերյալ որոշ ռեսուրսներ. [Խուլ, լսողության խնդիրներ ունեցողների և խուլ և կույր անձանց համար նախատեսված ռեսուրսներ]

Հ2. Ինչպե՞ս են խուլ և կույր անձինք շփվում այլոց հետ:
Պ2. Խուլ և կույր անձինք կարող են շփվել տարբեր ձևերով՝ օգտագործելով հիմնական հաղորդակցման համակարգերի համադրություն, որոնք ներառում են՝

- Հպման ազդանշաններ
- Օբյեկտի շոշափելի խորհրդանիշներ
- Protactile ժեստերի լեզու
- Ժեստ
- Նկարի խորհրդանիշներ
- Մատներով ուղղագրություն

Հ3. Ի՞նչ տեսակի հաղորդակցման տեխնոլոգիաներ են օգտագործում խուլ և կույր անձինք:
Պ3. Խուլ և կույր անձանց ուսուցման և զարգացման հետ կապված խնդիրները տարբերվում են յուրաքանչյուրի դեպքում՝ կախված տեսողության և լսողության խնդիրների տեսակից և մակարդակից, սկզբնական տարիքից (ծննդյան օրվանից կամ ավելի ուշ ձեռք բերված) և լրացուցիչ հաշմանդամությունների առկայությունից: Կապվեք Կալիֆոռնիայի խուլ և կույր անձանց ծառայությունների հետ՝ ֆունկցիոնալ, անհատականացված գնահատման համար: Նրանց փորձառու անձնակազմը խորհրդատվություն, ուսուցում և ռեսուրսներ է տրամադրում ընտանիքներին, ինչպես նաև կրթական և բժշկական մասնագետներին ամբողջ Կալիֆոռնիա նահանգում: